



համաձայնութիւն ամեն մի երկրի հաս-  
յութեան մէջ . պէտք է լուրջ, փաս-  
տաբանաժողովներ կազմակերպելու և հա-  
ւաքել ըստ կարելւոյն շատ ստորագ-  
րութիւններ . աստիք զամ պէտք է  
նաև ընտրել վստահելի մարմին մը,  
որ կարենայ եռանդուն կերպով հար-  
ցն առաջ մղել :

Մեր կողմէն կրնանք հազարաւոր,  
որ միջազգային իրաւաբանական  
խնդիրներուն տեղեկ անձեր յու-  
սադրած են մեզ, որ յարուցանելիք  
խնդիրը կրնայ ունենալ որոշ քա-  
ղաքական հետեանքներ, եթէ պե-  
տութիւններէն գոնէ մին (Անգլիա,  
Ամերիկա, Հոլանտա կամ մի ուրի-  
շը) համաձայնի նախաձեռնարկ լի-  
նել :

Վստահ ենք, յարգելի հայրե-  
նակիցներ, որ ազգային այս հրատապ  
խնդրին առջև, մէկ կողմ թողնելով  
կուսակցական բաժանումները, ամեն-  
քեզ պիտի գործէք ձեռք ձեռքի  
տուած, շնորհանուր ուժով պաշտպա-  
նելու համար մեր ընդհանուր ազ-  
գային շահերը :

Կը յուսայ և կը վստահի ձեր  
ընդհանրութեան ու անկեղծ հայ-  
րենասիրական պիտանքներուն  
վրայ :

Հ. Յ. Գ. ԱՐԵՎԵՍԻԱՆ ԲԻՐՈ

ՏՕՐՔՕՐ Օ՝ ԿԻՒՄԵՂ

ՄՈՒՐԻ ՄԵՏՆԱՎԻ ԴԻՄԱՅՐ

Նոր դրութեամբ կը դարձանէ ամեն  
տեսակ հիւանդութիւնքը . Մասնագէտն է  
ակաճիքի, քթի, կոկորդի եւ մանկանց  
տկարութիւններու :

Հիւանդ կ'ընդունի իր բնակարա-  
նը առանձնեան ժամը 9-11 եւ յերկու-  
եան 3-5 :

Վկայալու աղքատաց համար ձրի  
դարձանուծ :

422-50

ՀՐԱՄԱՆԱԳՈՒՄԻ ՍԵ ԱՌԹԻԻ

Անս Գեր . Մաշոյ յեւեմի նստա-  
կը, որ քերթիս յարաբարեան անց-  
եալ թիւերով դրած կոչիլն ի պատաս-  
խակ դիմած է մեզ ի հրատարակու-  
թիւն :

Աղէքսանդրի 8 Փետր. 1904

Մեծ . Տէր նմարգիր :

Գայթակղութեան առաջը առնուլ  
ամէն Գրիստոնէի պարտքն է, մանա-  
ւանդ նկեղեցակարի մի : Ձի գայթակ-  
ղութիւն պատճառովին չի ծնանիլը  
յաշխարհ' ծնանալէն լաւ վճարած է հոգ-  
ւոց փրկութեան համար մարդացեալն  
Աստուած, ըսելով « շաւ եր նեւ երե յիւ  
ծնեալ մարդն այն » : Եւ այս ամենայն  
իրաւամբ, զի անձնական մեղաց յիստ  
անձնական է միայն, եւ իր պատիժը  
պիտի ընդունի վաղ կամ անագան, իսկ  
գայթակղութեան մեղքը ընդհանրու-  
թեան կը յիստէ, եւ այն միայն է մարդ-  
կութեան ողբալի աղէտ : Ընդարտու-  
թիւնս չունի պէտք ջատագովի, զի հա-  
մայն ազգաց եւ ազանց պատմութեանց  
ամէն էջերը լի են զբախտի եւ անու-  
րանալի փաստերով 'ի հաստատութիւն,  
իւր ազգասէր, իւր կրօնական,  
ջանացած եմ միշտ գայթակղութեանէն

խորշելու, որ չըլլայ թէ վերոյիշեալ  
սարսափելի վճարն արժանանամ, Ձի  
ինձ շատ սիրելի է ծնած ըլլալու, եւ այն  
'ի Հայ եւ 'ի Գրիստոնէայ ծնողաց, որով  
միշտ կը պարծիմ, եւ այս սիրով տո-  
գորուած ընթացած եմ, եւ կ'աշխատիմ  
ցկեա մահուանս ընթացաւ :

Սակայն մարդս ընդհանրապէս վախ-  
ցածին կը հանդիպի :

Բաւական ժամանակէ 'ի վեր կը  
լսէի թէ Այվազեան Սրբազանը կրկնա-  
մուսնութեան մի հրաման տուած է . սա-  
կայն բնաւ չի խորհեցայ հետաքննին  
ըլլալու այդ խնդրին, որուն յաւելո  
պէտք է մորմոքիլ, քան թէ դէմը մա-  
քաթիլ : զի այդ 'նորին Սրբազանութեան  
վերնադրոյն մեծաւորաց կը պատկանէ :  
Սակայն երբ Ձեր թիւ 428 « Արշալոյս »  
ին մէջ կարգացի Երկեար տիկնոջ ձեռ-  
քը տրուած ամուսնալուծութեան հը-  
րամանագրին պատճէնը, որուն մէջ Այ-  
վազեան Սրբազանը բաւական ճարպիկ  
այլ յոյժ յոյժ համարարութեան ձեռով  
մի Հոռովեական եկեղեցին միանգա-  
մայն եւ զիս ալ յանուանէ համամիտ  
եւ թէ գործակից ցոյց տալու մտաբե-  
րած եւ ձեռնարկած է պարզապէս առ-  
ջեւ, փութացի Ձեր բաղձանքին համա-  
ձայն խնդրել պարզելով' այդ զրպար-  
տիչ հրամանագրին դէմ բողոքելու :

Հոռովեական եկեղեցւոյ Վարդա-  
պետութեան համեմատ օրհնուած եւ լը-  
րացած վաւերական ամուսնութիւնը չի  
կրնար երբէք լուծուիլ թայց եթէ մահ-  
ւամբ միայն յամուսնացելոց : Եւ այս  
վարդապետութեան Սուրբ գրոց, ան-  
խախտ աւանդութեան եւ Սր . եկեղեց-  
ւոյ մեկին եւ որոշ վճիռներովը հաս-  
տատուած են :

Ապա կարելի չէ որ Հոռովեական  
եկեղեցւոյ Առաջնորդ մը պանելով իր  
դաւանանքը' կարող ըլլայ յանդիմանիլ  
այսպիսի ամուսնալուծութեան մի ձեռ-  
նարկի երբէք . եւ չեմ կրնար մըտա-  
ծել որ Այվազեան Սրբազանը աղիտա-  
նայ այս վարդապետութիւնը, զոր եր-  
կար տարիներ ուսումնասիրած է Հոռով-  
մէական Վանքերու եւ Գարցնիքու մէջ :

Հետեւաբար 'նախայ Օրկանեանին  
ամուսնութիւն Երկեար տիկնոջ հետ չէ  
լուծուած բնաւ, եւ ո'չ ալ կրնայ ձեռ-  
քը ամուսնալուծութեան թուղթ մի ու-  
ունենալ Հոռովեական առաջնորդէ մի,  
եւ չունի իսկ, եւ չի կրնար երազել  
զայն :

Կը Ֆայ քննել թէ ինչ է ուրեմն  
'նախայ Օրկանեանին ձեռքը դրուած  
թուղթը, զոր իր հրամանագրին հիմը  
գրած է Այվազեան Սրբազանը :

'նախայ Օրկանեան Պատրիարքարա-  
նին ատենը զանգատ մասոց իր Երկ-  
եար կողակցին դէմ, որ տարիէ մի 'ի վեր  
իմէն հետո ուրիշ առից կը բնակէր :  
Երբ Պատրիարքարանին ատենը ներ-  
կայացան երկու ամուսինը, հակառակ  
ընդէմ ամենայն խրատուց եւ յորդո-  
րանաց 'ի սէր եւ 'ի միաբանութիւն,  
կնիկը ժխտեց բացարձակապէս իր էր-  
կանը հետ կենակցելու առաջարկը . մի-  
անգամայն ստորագրեալ թուղթ մի եւս  
տուաւ անոր ձեռքը, որով կը յատարա-  
րէր թէ ինքը կը հրամարի ապագային  
անկէ պարէն կամ ապրուստ խնդրելէն,  
եւ յետ մահու զանի ժառանգելու իրա-  
ւունքէն :

'նախայ Օրկանեան խնդրեց որ իր  
կնկան այս յատարարութեան իմ ներ-  
կայութեանը եղած ըլլալը հաստատեմ :  
Օրինաւոր խնդրանք | որուն չի կարե-  
նալով դէմ գնել ստորագրեցի . եւ կըն-  
քեցի Պատրիարքարանի կնքովը :

Բայց եթէ 'նախայ Օրկանեանին  
ձեռքը դրուած թղթին ճիշդ օրինակը  
Պատրիարքարանին արձանագրութիւն-  
ներէն հանելով ընթերցողաց անոնք զը-  
նենք' աւելի եւս կը պարզի խնդիրը . եւ  
ամուսնալուծութեան հրամանագրին  
մտացածին խախտու հիմը երեւան կու-  
գայ :

Ան այդ թղթին օրինակը . բառ  
առ բառ :

Էրմենի միջոցեքն 13 սենեակէ  
էվիլէյ Նախայ Օրկանեան իչե պակ  
օջտուղուսան վէ պիր պուշոմ սենե-  
սեն պէրու օնսան ողագ գայրդրու-  
սան վէ հիյ պիր սանս օնուկ իչե  
եաշաւուք խսեմէսիլ/սենեկ պուսան  
եօյնէն գաւար 'նախայ Օրկանեան-  
սեն հիյ պիր նաւագա խսեմէյն  
եախօք միխա խսեմէյն հազար  
գայրուսիյ պուսան իշարէթէն պու  
ֆեաղրս ինկայասրմ մեզի/սր շա-  
հիսյէրիս նուզարուսէն :

Գահիրէն 10 Հոկտեմբեր 1902  
ՆԻԿՏՈՐ ՊԵՏՐՈՍ  
Ճանչեանը գրքը

Շահիջեր

- 1 ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԻՆԱՍԵԱՆ .
- 2 ՄԻԿԱՅԷՂ ԵՒԴԱՅԻՄՅԱՆ .
- 3 ԳԻԿՈՐ ԻՍԿԵՆՏԵՐՅԱՆ .
- 4 Doct. Georges Evlian Dentiste

Պիզիւ հոնիւրիզսե կազմըս պու գա-  
րար :

Գահիրէ 11 Հոկտեմբեր 1902

ԻԳՆԱՏԻՍ Վ. ՄԱԼՕԵԱՆ  
փոխանորդ Պատրիարքարանի  
(սեյի կնքն)

Կը հարցնեմ հիմայ ամենէն պար-  
զամիտ մարդոյ, որ պարզ կարող մի  
գիտնայ, թէ ուր է արեօք այս թղթիս  
մէջ գտնուած ամուսնալուծութիւնը  
կամ բաժանումը, կամ ո'ր մի եզրէն  
եզրակացուց 'նորին Սրբազանութիւնը  
այդ նիթագրեալ բաժանումը, որուն  
յեցեալ յօրինեց այդ հրամանագրի :

Ուստի լաւագոյն կը լինէր եթէ  
իւր Սրբազանութիւնը ուրիշ հիմ մի դը-  
նէր այդ հրամանագրին եւ ո'չ եթէ մը-  
տացածին եւ ինքնահանր բաժանում մի  
որ չունի երբէք իր եզրուութիւնը :

Բայց նիթագրեալ պահ մի Այվազ-  
եան Սրբազանին հետ թէ այդ թուղթը  
բանագրուեալ մեկնութեամբ բաժանման  
թուղթ համարի : Արեօք բաժանումն  
երկուց ամուսնացելոց իրաւունք կու-  
տայ մէկուն կամ մէկակին երկրորդ ա-  
մուսնութեան անցնելու : Եւ մոտեցաւ կը  
կարծես 'նորին Սրբազանութիւնը որ բա-  
ժանումն, լուծուին' ըսել չէ, եւ թէ այս  
երկու իրաւաբանագրին եզրերը շատ մեծ  
հեռաւորութեամբ տարբեր են իրարմ :

Բայց արդէն իր հրամանագրին  
վարպետ դարձուածքին խորհուրդ հասէ :

Կրնար Սրբազանը, քանի որ այդ  
թղթիկին բանագրուեալ մեկնութեան  
թուիս հովանոյն սակ խորհած է պար-  
տելի իր արարքը, բաժանման եզրին  
տեղ « յուժուսն » կամ ամուսնալուծու-  
թեան եզրը գործածել : Սակայն իր բազ-  
մամեայ դեգերումը կաթողիկէ հեղինա-  
կաց մէջ իր միտքը լաւ տպւորած էր,  
որ ամուսնալուծութիւնը չունի իր գո-  
յութիւնը Հոռովեական եկեղեցւոյ մէջ .  
եւ եթէ ամուսնալուծութեան եզրը գոր-  
ծածելու ըլլար արթուն լսելաց խոճոռ  
պիտի հնչէր : Ուստի բաժանման եզրը  
ընտրեց իր վախճանին հասնելու հա-  
մար, որով թէ արթուն լսելիքը կրնա-  
լին խաբուիլ, եւ թէ պարզամիտները  
կը հաւատային թէ Հոռովեական եկե-  
ղեցւոյ մէջ ամուսնալուծութիւն կայ :  
Ան, այս էր իր վախճանը, Աստուած  
բարի վախճան տայ ամենուս :

Վստահ եմ, Մեծապատիւ Տէր նմը-  
բազիր, որ պիտի հասէք հաւատարմու-  
թեամբ հրատարակել իմ այս բողոքը  
յուղղութիւն գայթակղեալ մտաց եւ 'ի  
յայտնութիւն ճշմարտութեան, որոյ փո-  
խարէն ընդունեցէ իմ սրտագին շնոր-  
հակութիւնս :

ԻԳՆԱՏԻՍ Վ. ՄԱԼՕԵԱՆ

ԲԱՆԱԲԱԿԱՆ

—106—

ՄՈՒՐԻՄՈՒՆՈՅ ՄԱՍԻՆ

Մակեդոնական շարժմանց մա-  
սին ժողովայ Տիւ Գեդի մէջ խմբա-  
գրական յօդուած մը կը կարգանք,  
որուն մէկ քանի մասերը կարտա-  
գրենք, իրենց շահեկանութեանը  
համար :

Գահիրէ մը օրերէ իվեր, կը գրէ  
վերոյիշեալ թերթը, Մակեդոնիոյ  
կազմակերպիչ մասնախումբի գոր-  
ծունէութիւնը մեր ուշադրութիւնը  
կը հրաւիրէ իր վրայ :

Ճարտն այսօրուան վտանգն է,  
իսկ Մակեդոնիա վաղուանը :

Գարնան դարձեալ պիտի վե-  
րակին Մակեդոնական ապստամբու-  
թիւնները, և հաւանական է որ  
Պուլկարիա ալ այս շարժումներէն  
վերագրուի :

Ու ինչ կ'ընէ Եւրոպան :

Եթէ Արեւելքի մէջ ամէն բան  
զանգաղ ընթացք մը ունի, ասով  
չ'ապացուցուի թէ' Եւրոպա իրեն  
ստանձնած պարտականութիւնները  
անթերի կերպով կը կատարէ :

Գաղաքային խնամակալներու  
ընտրութեանց աւթիւ տեղի ունե-  
ցած անցուդարձերը շատ որոշիչ  
հանգամանք մը ունին : Երկար պայ-  
մանաժամի կարօտ եղան, մինչև որ  
անոնց աւանձնաշնորհները և տիտ-  
ղոսները որոշուեցան : Տակաւին հա-  
զիւ քանի մը օր կայ, որ անոնք Պո-  
լիսէն մեկնելով Մալձոնիկ հասած են  
և ահա անմիաբանութիւնները սկսան  
թուրք իշխանութեանց, և անոնց  
միջև :

Եւ արգարե անոնք քաղաքա-  
յին պաշտօնատարներու ցանկալի  
տիտղոսը ունին, բայց ոչինչ կը ճըշ-  
էն իրենց աւանձնաշնորհմանց և  
իրաւանց սահմանները : Ամէն ինչ  
կախում պիտի ունենայ թուրքիոյ  
ընդհանուր պատուիրակին վարան-  
ցուկ և կարգաւիկ կամքէն, որ Եւր-  
տղէն պիտի ընդունի իր հրահանգ-  
ները, և որով' քաղաքապահ զօրքերու  
վարչութիւնը ստանձնող զինուորա-  
կան խնամակալներու պաշտօնին ու-  
ժը անորոշ վիճակի մը կը մտանուի :

Արդէն գիտնեք թէ' վեց մեծ  
պետութիւնները 'նեակայացուցիչներ  
պարտին ունենալ միջազգային խոր-  
հուրդի մը մէջ, բայց ահա մինչև  
ցարք ինչ որ կարողացան ընել :

Ա. Իտալիա իրեն 'նեակայացու-  
ցիչ նշանակեց Տը ձիօրճի զօրավարը,  
որուն համար թէև երկար բանակ-  
ցութիւններ տեղի ունեցան, սակայն  
արդիւնքը նկատելի ըլլալէ շատ հե-  
ռի միաց և տակաւին ամէն ինչ վէ-  
ճի ներքե է :

Բ. Գերմանիա խստացած է թէև  
պատգամաւոր մը ընտրել, բայց տա-  
կաւին որոշուած չէ թէ ո'վ պիտի  
ըլլայ այդ անձը :

Գ. Ռուսիա զօրապետ մը կար-  
գած է այդ պաշտօնին, բայց այս  
զօրապետն ալ գուցէ դեռ Ս. Իէ-  
թէրպուրիկ կ'ապասէ :

Դ. Անգլիա իւր 'նեակայացու-  
ցիչ ֆէյրօլմ' զնդապետը նշանա-  
կած է, որ վիէննայի նախկին հիւ-

# Յ. ՓԷՄՊԵՃԵԱՆԻ ԸՆԿ.

Գ.Ա.ՆԻՐԻ (ԵԳԻՊՏՈՍ)

## ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԾԻԱԽՈՏՆԵՐՈՒ ԵՒ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՍԻՆԱՐԻՔՆԵՐՈՒ  
Յասկապէս պատրաստած մեռաշէն սիխոթքներ

ԳՈՐԾԱՐԱՆ ԵՒ ԳԼԵՆՈՒՄ ՄԾԵՐԱՆՈՅ  
Հեռագրային Հասցէ.—ՓԷՄՊԵՃԵԱՆ: Թիեթօն Թիւ 689: Նախկեսուի Թիւ 129

պատու է և Արեւելեան երկիրներու բաւական հմտութիւն ունի, սակայն հակառակ «վաղը իր պաշտօնին գլուխը պիտի անցնի» բնութեան, գեռանոր գալը չ'ստուգուեցաւ և այսպէս՝ տէրութեան կարգած երեսփոխաններէն հաշիւ երկուքը Պօլիս կը գտնուին ցարդ:

Այս լաւատես տեղեկութիւնները ստացուած են Բարբիլի Աւստրո-Հունգարական հրեայտանային կողմէն, որ Վոյուա ֆրանսական օրաթերթին մէջ խմբագիրը արեւելեան խնդրոյն վրայ տեսակցելով՝ հետեւեալ կարծիքները քաղած է:

«Տէր Աստուած՝ կ'ըսէ կոմսը. թուրքերու անկեղծութիւնը սոյն խնդրոյն մէջ զարմանալի է և կ'արժէ նկատողութեան առնել: Բայց տաճիկներն ալ չա՛հ ունին մակեդոնական խնդիրը օրուան հարց ընելէ չ'նշեալուն մէջ, և նոյն իսկ ասոնք պիտի ստիպուին այս խնդրոյն մէջ մեղի օգնել: Մենք իբր պատուիրակ երկու հին գետնապաններ կարգեցինք՝ որոնք շատ ծանօթ են երկրին և հմուտ խօսուած լեզուներուն: Ի՞նչ պիտի ըլլայ որչապէս իւրեանց գերը: Անոնք սուլթանին բարձր պատուիրակ Հիւմի բաշաի հրամաններուն տակ պիտի գործեն: Իրաւ է որ մեր կարգած երկու պատուիրակները «օղնական պատուիրակները ու սիտաղը կը կրեն» և թէ անունով պիտի օգնեն Հիւմի բաշային, բայց իսկապէս անոնք պիտի ըլլան մեծ գեր կատարողները:

Եւ թէք Աւստրո-Հունգարական ծրագիրը յաջողութիւն չի գտնէ:

Ես երբէք բարենորոգումներու գործադրմանց մասին չեմ վախնար ընդհակառակը՝ ամեն ինչ մեծ յոյս կուտայ թէ բարենորոգումներու գործադրումը ունէ խոչնդոտի չ'պիտի հանդիպի, բայց եթէ մեր շահքերը ի գերեւ ելլեն, լուր կուտանք:

Լանեանի ամուսնութեանն առթիւ: Վսեմ. Պօղոս Բաշա Նուպար իր նուիրած 1000 ոսկիովը չ'բաւականանալ, այս ուրախութիւն պարգաւին մէջ, Ն. Վսեմութիւնը բարուլթիւնը ունեցած է Կահիրէի թոշակուոր աղքատաց մէջ մէկ ամսական ալ նուիրել, իսկ վարժարանի կարօտ աշակերտներուն մէջ մէկ ձեռք նոր հագուստ շինելու համար պէտք եղած գումարը տրամադրած է Ն. Վսեմութիւն Տիգրայի Բաշայի, որոյ տրամադրութեան տակ կը գտնուի նաև վերոյիշեալ 1000 ոսկին, ի հարկին գործածուելու համար:

Երբ Ն. Վսեմութիւն Պօղոս Բաշա Նուպար հայ աղքատները ուրախացնելու պահուն գեղեցիկ մրտածուժը կուներայ նաև Եգիպտոսայտուն զիրքին համապատասխանող Հայ վարժարան մը ունենալու ալ նախաքայլերը առնել, կարժէ որ մենք ալ ի սրտէ շնորհաւորենք ամուսնութիւնը իւր շաւակին և երջանկութիւնը մաղթենք նորապրտակ ամուսին, Ազնուաշուք Տէր և Տիկին Առաքել պէյի, որոնք պահանջով ենք թէ՛ իրենց բարեգործութիւններով արժանաւոր յաջորդը պիտի ըլլան Բարձր. Նուպար բաշայի մեծանուն օրբոյն և անոր Տիկնոյ, Վսեմ. Տէր և Տիկին Պօղոս բաշայի:

### Վ. ԲԱՐԹՈՂ ԲԱՇԱ

Երեքշաբթի օրը, Պարսկական ընդհանուր Հիւպատոսը Ն. Վսեմութիւն Արբաշամ բաշա Բարթողի ապարանքը երթալով իր իսկ ձեռքով Բաշային կուրծքը կախած է Առիւծի և Արեւական Ա. կարգի պատուանշանը, զոր Վեհափառ Շահը շնորհած է իր մեծ Վէզիրին միջոցաւ, որ այս պահուս Եգիպտոս կը գրտնաւի:

Ն. Վսեմութիւն Բարթող բաշա՝ Պարսից Ընդ. Հիւպատոսին մեկուսմէն վերջ, այցելութեան երթալով Բարձր. Մեծ Վէզիրին, ի Սան-Սթեֆանօ, շնորհակալութիւն յայտնած է Վեհափառ Շահին շնորհացը համար: Կը մաղթենք որ Ն. Վսեմութիւն Արբաշամ բաշայի կուրծքը՝ որ անկեղծութեան թանգարան մ'է, նորաւոր պատուաշաններով զարգարուի և մենք՝ ինչպէս այժմ, այն ատեններն ալ առիթը ունենանք շնորհաւորելու զինք ի սիրտ և ի հոգի:

### ՊԱՐՏԻՑ ՆՈՐ ՀԻՒՊԱՏՈՐԸ

Վսեմ. Միհրան խան Գալֆաեան Աղէքսանդրիոյ Պարսկական Հիւպատոս անուանուած է:

Վերջերս մեր Եգիպտոսական Ազգայիններուն ցոյց տրուած համարումն ու համակրանքը մեղի ուրախութիւն կը պատճառէ, և չենք վարանիր շնորհաւորելու նաև Վսեմ. Գալֆայեան խանը, որ իրեն ընծայուած պատուով Հայ ազգին վարկը բարձրացուցած կըլլայ, մանաւանդ

թէ՛ ինչպէս կ'ըսուի, անգրանիկն է մեր Հայերուն մէջ՝ որ օտար տէրութիւն մը կը ներկայացնէ Եգիպտոսի հողին վրայ:

### ԹԱՏՐՈՆ

Առաջիկայ Չորեքշաբթի երեկոյին 17 Փետրուար (ն. տ.) Փէլէկեան քոյրերը՝ Օրթորդը Վարդիթեր և Հերանոյ, պատրաստուած են Շարա Ապտիւլ-Ազիզի թատրոնին մէջ ներկայացնելու «Չաւակը» անուն թատրոնը, բաժանորդագրութեան 4 ներկայացումներու առաջինը, որուն համար ինչպէս կը լսենք, մեր ազգայինները փութկոտութիւն ցոյց կուտան այժմէն թատրոնին մէջ իւրեանց սեփական տեղերը ունենալու:

Ինչպէս թերթիս չորրորդ երեսը հրատարակուած յայտարարութեանէն կը տեսնուի, շնորհիւ Կարգադիր Մանախմբի Լանքերուն, Օրթորդ Ֆէլէկեանները իրենց աշակից ունին նորանոր ուժեր, ինչ որ կ'ապացուցանէ թէ կրկին տեսակէտներով շատ յաղող երեկոյթ մը պիտի ունենայ Գահիրէն. երեկոյթ՝ որուն պէտքը կ'զգարեալ արդարև բարեկենդանի այս զուարթ օրերուն մէջ:

### ՀՆՈՒՊԻՐՆԵՐ

Ս. Բէքրայուրկ 7 Փետր. — Եօփօս Վրէժի կ'ըսէ թէ՛ գրպարտքիս է այն գրոյցը թէ՛ Ռուսիա իր պատրաստութիւնները անբողոքեցնելու համար ձարոնի հետ իր բանակցութիւնները կ'երկարաձգէ. սակայն եւ այնպէս՝ եթէ երկու Տերութեանց մէջ խզում ալ տեղի ունենայ, ասիկայ պատրաստ չ'ընշանակիր:

Թօփօ 10 Փետր. — Ճարակցի գունդերը ցամաք էլլելով՝ Բորեաի, Մառաւօի և Չեմուշօի մէջ դիրք գրանցին, որ կը գտնուին Վառիկի եւ Բոսիից անուն Ռուս մարտաւարներ, որոնք կ'աւարտի կռիւն մը վերջ ընկողմեցան:

Թօփօ 11 Փետր. — Ճարակցի զորքերը անկախաբար երբեք իրարստակութիւնը մեր կ'ընէ, յորում կը պատրաստ յարաբերութեանց խզումներն անոսց կ'աւարտուած բանակցութիւնները եւկը քացարե իր կացութիւնը:

Ս. Բէքրայուրկ 10 Փետր. — Այնքան ծովակալը կը հետադրէ թէ՛ անտոյ 9 ին 15 գրահաւորներ Բոր-Արթիւրը ռմակոծեցին. Բորթոյս, Տիւսնա Ասօյս եւ Եօփի Թուս մարտաւարներ մեծ վնասներ կրեցին:

Ս. Բէքրայուրկ 10 Փետր. — Չարք աշար յայտարարութիւն մը իրարստակեց, որուն ինասը իսկապէս պատրաստ կը նշանակէ:

Վարիէկ եւ Բորիէկ անուն զորահաւորներու մասին եկած յորերը պաշտօնապէս ստուգուած են, անոնց մէջ գտնուող նաւագները Բասթալ անուն ծրուանակալ գրահաւորին մէջ ասպատակուած են:

4 Պոլիս 10 Փետր. — Պայմաններու կացութիւնը հետզհետէ անելի ծանր կերպարանք մը կ'առնէ. Թորթօ - Պոլիսական պատերազմի մը հետեւեալ ամէն վայրկեանի մեծ վախը դարձած է. երկու կողմանէ տարիներ կը տեսնուին:

Վիեննա 11 Փետր. — Վիեննական քաղաքի քերքեր ձարակցիներու յայտարարութեան զովաբանութիւններով կը շատագովեն:

Պերլին 11 Փետր. — Հանրային կարծիքը ձարակցի նկատմամբ շատ նպաստաւոր է:

Ժրնեյ 12 Փետր. — Պոնաքարը գորակերք ու հոս կը գտնուի՝ Սեն Բէքրայուրկի մեկնեցաւ, որից ստիպողաբար կ'անջուտ է:

Ս. Բէքրայուրկ 12 Փետր. — Այնքան ծովակալը կը տեղեկացնէ թէ՛ պայքարի թորթիւններու արտադրած ֆարիւղը մեծ ֆանակութեամբ գոնէր պատճառեց. Վիւստրա-Կարակոն վիճակը գոնացուցի է:

Վրասիլօսօփ, Նախասափի, Սեւր եւ Մաւաւօ ֆաղափները իրարու կ'ապոյղ հետադարձան թելերը կը քրքրուած են:

Լոնսրա 12 Փետր. — Ճարակցի Բորեաի մայրաքաղաքը, Սեւրը, գրտուած են:

Սեն Բէքրայուրկէն պաշտօնապէս կ'իմացնեն թէ՛ ձարակցական վեց մարտաւարներ քերքը վնասներ կրած են Բոր-Արթիւրի մէջ:

Ճարակցական յայտարարութեան մը նախընթաց իր թէ քոյրը նախորդներէն սակ ասպատակուած Ռուս գունդերուն վրայ յարձակած են ռմակոծման ամենեւնի սափ միջոցին, թորթիւնները իր թէ դեպի արիւնքը ուղղուելով, ռուսներու ձարակցական կրած են եւ նախանկախօք պաշարները շարունակուած է մինչեւ երեքշաբթի առտոս:

Այնքան ծովակալը կը հետադրէ թէ՛ նախորդ այնքան մեծ վնասներ կրած են որ կարելի չէ շարժման մէջ ըլլալու վիճակը նախադասել միւսները քերքու առ առաւելը 15 օրերու մէջ պատրաստ կը լինին:

Բարթո 12 Փետր. — Հայասի գործակալութիւնը Թիեթօնէն կը տեղեկանայ թէ, երեքշաբթի երեկոյ ձարակցի փորձեցին Բոր-Արթիւրի Արեւելեան կողմը հասնել իրենց մարդիկը. բայց այս փորձը չի յաջողեցնէ զոս, ցամաք տեղը երկու գորակներն ալ ոչնչացած են:

### ՀՐԷՐՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ

ԿԻՐԱԿԻ 14 ՓԵՏՐՈՒԱՐ 1904

6015	3498	11821	405	4910
817	1290	1863	1894	2164
2532	2917	3049	4050	4263
4331	4515	4866	4895	5308
5616	5670	6796	7673	7861
8495	8556	9088	10087	10865
11144	11483	11967		

### Ա.Զ.Գ.

Տեղւոյ անձկութեան պատճառաւ այս շաբթուան մէջ կատարուած ամուսնութեանց արձանագրութիւններն յաջորդ թուով, որ առաջիկայ ՇԱՐԱԿՕՐԸ պիտի հրատարակուի:

### Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ ԼՈՒԿԻՆԻ

#### ՆՈՐ ՎԱՐԺԱՐԱՆ

Գալտեան վարժարանը աշակերտ ունեցող ծնողներուն աչքը ըլլայ. նոր կառուցանելի վարժարանին հիմնարկէքը տեղի ունեցած կրնանք նրկատել, Ն. Վսեմութիւն Պօղոս բաշա Նուպարի նոր յատկացուցած 1000 ոսկուոյ նուէրովը. նուէր մը՝ որ տեղի կուներայ իր օրբոյն Ազն. Առաքել Պէյի՛ ընդ Օրթորդ Նէվիկի Աս-

# Թ Ա Տ Ր Ո Ն Ե Գ Ի Պ Տ Ա Կ Ա Ն

Ի ՇԱՐԱ ԱՊՏ - ԷԼ - ԱԶԻԶ

## 1904

ՓԵՏՐՈՒԱՐ 17 ՉՈՐԵՔՁԱՐԹԻ ԳԻՁԵՐ ԺԱՍՆ ԶԻՅԴ 9 1/2 ԻՆ  
ԽՄԲԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ ԱՄԲՈՒՆԱԿԱՆ ԴԵՐԱՍԱՆՈՒՅԻՔ ՕՐԻՈՐԴ ՎԱՐԳԻԹԵՐ ԵՒ ՕՐԻՈՐԴ ՀԵՐԱՆՈՅԵՒ


### ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

ԿԸ ՏԱՅ

### Ա. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒԱԻ



### ՏՈՒՄ 5 ԱՐԱՐ

ՊՈՒՍՂԱՐՉՈՒԹԵԱՄԲ ՏԱՂԱՆԴԱՒՈՐ ՈՂԲԵՐԳՈՒՅԻ

ՕՐ. ՎԱՐԳԻԹԵՐԻ

## ԱՆՁԻՆՔ

ՊԱՌՕՆՈՒՀԻ ՏՕՐԻՆԻ	.....	.....	ՏԻԿՆ ԼՈՒԱՐԴ
ՊԱՌՈՆ ՄԱԲՍ	.....	Պատկանող՝ խորր որդին	ՊԱՐՈՆ ՇԱԽԱՐԸ
ԺՕՐԺ	.....	Արժունի փաստաբան	, ՍՄԲԱՏ
ԺԱԳ—ԿԼՕՏ	.....	Պատկանող ախոռապետ	, ԱՐԱՄ
ՄԱՏԼԷՆ	.....	Որր գեղարվեստ	ՕՐ. ՎԱՐԳԻԹԵՐ
ԺԷՐՕՄ ՊԱՊ	.....	.....	ՊԱՐՈՆ ՇԱԽԱՐԵԱՆ
ԱՆՏԻԷ	.....	Մատչենի դրացին	ՕՐ. ԷՔԱՆՈՅԸ
ՄԻՆԷ	.....	Բժ իշկ	ՊԱՐՈՆ ՇԻՇՄԱՆԵԱՆ
ՏԻՆՕՐԱ	.....	Տիկուայի նշանածո	ՏԻԿՆ ՇԱԽԱՐԵԱՆ
ՌԷՄԻ	.....	.....	ՊԱՐՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ
ՏՕՄԻՆԷՔ	.....	Գի. զաջիք Է. Է. Է.	, ՕՆՆԻԿ

ԵՐՐՈՐԴ ԵՒ ԶՈՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱՆԵՐՈՒՆ ՄԵՋ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԿՅՆՑԻ

Միջնադարերու Վիզոցին Մանիքո ՍԱՆԳԻՆԻ ԽՈՒՄԲՐ պիտի նուսգե. ճՕԴՕՆՏԱ, ՊՕԶԵՄ, ԲԱՒԻԱԶՁԻ, ԳՈՒԱԼԵՐԻԱ-ՐԻԻՕ-ԹԻԴԱՆԱ, ԱՅՏԱԹԷՆ ընտիր կտրուեր .

## ԳԻՆԵՐ

ՕՐԵԱԿ Ա. — 100, ՕՐԵԱԿ Բ. — 60, ՖՕԹԵՕՅԼ (Ռեզերվե) . — 20, ՖՕԹԵՕՅԼ . — 15, ՍԹԱԼ . — 8 ՎԵՐԱՏՈՒՆ . — 5